ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/52

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ
Մասնակից՝ «Արտակշին» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2033-2022 գրությամբ «Արտակշին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 31.01.2022թ.-ի գրության հիման վրա, 07.02.2022թ.-ին «Արտակշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.02.2022թ.-ին:

08.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/52 համարի ծածկագիրը:

17.02.2022թ.-ին և 04.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.03.2022թ.-ին:

2. **<u>«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 31.01.2022թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքներ համար սննդամթերքի ձեռքբերման համար կազմակերպված ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ին 07.01.2022թ. ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ, որին ի պատասխան մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է կնքված պայմանագիրը, սակայն Տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի կատարման և Որակավորման ապահովումների պահանջագրերում առկա են եղել սխալներ, ինչի պատճառով պատվիրատուն չի ստորագրել պայմանագիրը:

Ուստի Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի բ. պարբերությունը՝ «որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց», որոշել է մերժել տվյալ մասնակցի հայտը:

Քանի որ ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, ուստի Ձեզ ենք ներկայացնում «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ի ավալները, ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի արձանագրությունները, պայմանագիր կնքելու առաջարկը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արտակշին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 18.02.2022թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ի 14.02.2022թ. գրության՝ ցանկանում եմ Ձեզ տեղեկացնել, որ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի Կնքված պայմանագրի մասին հայտարարության մեջ Մասնակցի ներառված լինելը վրիպակ է եղել, և թյուրիմացության պատճառ է հանդիսացել այն, որ Մասնակիցը տվյալ օրը ներկայացրել էր ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4, թիվ 9 և թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ ՀՈԱԿ-ների պայմանագրերը՝ պատշաճ ձևով հաստատված: ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՅԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի Կնքված պայմանագրի փոփոխված/շտկված տարբերակը հրապարակվել է gnumner.am կայքում:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի պայմանագիրը մասնակցի կողմից 14.01.2022թ. ամսաթվով հաստատված ներկայացվել է Պատվիրատուին 21.01.2022թ.՝ պայմանագիր կնքելու առաջարկը ստանալու օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, իսկ վճարման պահանջագրերում եղել են սխալներ, ուստի Պատվիրատուն չի կնքել պայմանագիրը: Ընթացակարգի բոլոր մասնակցներին ուղարկվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի Արձանագրություն 5-ը: Եվ քանի որ պայմանագիրը ներկայացվել է պատվիրատուին 21.01.2022թ., գործընթացին ընթացք է տրվել հաջորդող աշխատանքային օրը՝ 24.01.2022թ. և պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է դիմել 4-րդ աշխատանքային օրը՝ 31.01.2022թ.:

ՀՀ Ֆինանսների նախարարություն ուղարկված գրության մեջ պատվիրատուն չի նշել, որ Մասնակիցը հրաժարվել է պայմանագիրը կնքելուց, այլ նշել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է կնքված պայմանագիրը, սակայն Տուժանքի ձևով նրկայացված Պայմանագրի կատարման և Որակավորման ապահովումների վճարման պահանջագրերում եղել են սխալներ, ինչն էլ հիմք է հանդիսացել պատվիրատուի համար պայմանագիրը չկնքելու:

Մասնակցի կողմից դիրքորոշման մեջ նշված է, որ պայմանագիրը կնքված է, մինչդեռ պատվիրատուի կողմից պայմանագիրը չի կնքվել և մատակարարը չունի կնքված պայմանագրի իր օրինակը:»:

3. <u>«Արտակշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «Արտակշին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2033-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

«Արտակշին» ՍՊԸ-ն 14.02.2022թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացվում է Ձեզ այն մասին որ «ԱՐՏԱԿ ՇԻՆ» ՍՊԸ-ն 2022 թվականի հունվարի 14-ին կնքված ստորագրված Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ ՀՈԱԿ է ներկայացրել պայմանագիրը, պայմանագրի ապահովումը և որկավորման ապահովումը:

Պատվիրատուն 14 հունվար 2022 թվականին կնքել և ստորագրել է պայմանագիրը, փաստացի պայմանագիրը ուժի մեջ է մտել, պատվիրատուն կնքված պայմանագրի մասին հայտարարություն է հրապարակել տեղեկագրում: Որից հետո 09.02.2022 թվականին ընկերության էլեկտրոնային փոստին Ֆինանսների նախարարության կողմից տեղեկացվել է, որ նախաձեռնվել է գնումներին գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«ԱՐՏԱԿ ՇԻՆ» ՍՊԸ-ին պատվիրատուն հնարավորություն չի տվել շտկելու անհամապատասխանությունը:

Պատվիրատուն Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը բողոքում վկայակոչել է թե մասնակիցը «ԱՐՏԱԿ ՇԻՆ» ՍՊԸ-ն, հրաժարվել է պայմանագիր կնքելու առաջարկից, սակայն հակասելով իր բողոքին նշել է նաև որ պայմանագիրը ժամանկին ներկայացրել է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ ՀՈԱԿ, որից հետո տեղեկագրում հրապարակել է կնքված պայմանագրի մասին հայտարարությունը:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին ըստ պատվիրատուի կարծիքի, որ պատվիրատուի մոտ ի հայտ է եկել գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքերը, սակայն պատվիրատուն խախտելով Կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 13-րդ ենթակետի պահանջը ՀՀ ֆինանսների նախարարություն է դիմել 11-րդ աշխատանքային օրը մասնակցին «ԱՐՏԱԿ ՇԻՆ» ՍՊԸ-ին նախաձեռնել է գնումներին գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:»:

4. <u>ՍՑ-LO-2022/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 13.12.2021թ.-ին հայտարարվել է «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արտակշին» ՍՊԸ-ն:

iii. «Արտակշին» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և

պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մի շարք չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Արտակշին» ՍՊԸ-ին:

v. 28.12.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն 07.01.2022թ.-ին Մասնակցին է ներկայացրել «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ու որակավորման ապահովումների ծանուցումը:

vii. Հանձնաժողովի 24.01.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Արտակշին» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պայմանագիրը, սակայն որակավորման և պայմանագրի ապահովումների պահանջագրերում առկա են սխալներ, ինչից ելնելով Պատվիրատուն չի ստորագրել պայմանագիրը, ուստի Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը 23-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 41-րդ, 43-րդ և 46-րդ չափաբաժինների մասով մերժել:

viii. Մասնակցի կողմից Պատվիրատուին ներկայացված որակավորման ապահովումը թվագրված է 14.01.2022թ.-ով, իսկ պայմանագրի ապահովումը թվագրված է 21.01.2022թ.-ով, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումների կից ներկայացված վճարման պահանջագրերում լրացվել է «ներկայացված ամսաթիվ» դաշտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2033-2022 գրությամբ «Արտակշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով

նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից 13.12.2021թ.-ին հայտարարված «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 4.2 հավելվածով հաստատված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման ուղեցույցի համաձայն՝ վճարման պահանջագրի «ներկայացման ամսաթիվը» դաշտը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 13.12.2021թ.-ին հայտարարված «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ մի շարք չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Արտակշին» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված 28.12.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր: Պատվիրատուն 07.01.2022թ.-ին Մասնակցին է ներկայացրել «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ու որակավորման ապահովումների ծանուցումը: Սակայն Մասնակցի կողմից Պատվիրատուին ներկայացված որակավորման ապահովումը թվագրված է 14.01.2022թ.-ով, իսկ պայմանագրի ապահովումը թվագրված է 21.01.2022թ.-

ով, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումների կից ներկայացված վճարման պահանջագրերում լրացվել է «ներկայացված ամսաթիվ» դաշտը:

Հանձնաժողովի 24.01.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշում է կայացվել «Արտակշին» ՍՊԸ-ի հայտը 23-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 41-րդ, 43-րդ և 46-րդ չափաբաժինների մասով մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Արտակշին» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արտակշին» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2033-2022 գրությամբ «Արտակշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/52 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արտակշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**